բնական ռեսուրսների բանական օգտագործմանն ու դրանց վերարտադրությանը նպաստելը,

բ) ՀՀ տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ տեսչական վերահսկողության իրականացման ապահովումը,

գ) ՀՀ տարածքային կառավարման մարմինների համապատասխան աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը:

Կոնտակտներ.

Տեսչության պետ, հեռ.՝ 523799,

Հաշվառման և վերլուծության բաժին, հեռ.՝ 523796,

Ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժին, հեռ.՝ 523796,

Ջրերի վերահսկողության բաժին, հեռ.՝ 523796,

Մթնոլորտի վերահսկողության բաժին, հեռ.՝ 567404,

Կենսաբազմազանության, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության բաժին, հեռ.՝ 567404,

Կենտրոնական լաբորատորիա, հեռ.՝ 227771,

Տարածքային բաժիններ՝

Երևան, հեռ.՝ 223467, Սյունիք, հեռ.՝ 0285 67369, Արարատ, հեռ.՝ 0236 43050, Արմավիր, հեռ.՝ 0231 54387, Գեղարքունիք, հեռ.՝ 0261 25160, Կոտայք, հեռ.՝ 0222 21758, Տավուշ, հեռ.՝ 0263 33934: Լոռի, հեռ.՝ 0322 20364, Շիրակ, հեռ.՝ 0312 33249, Վայոց ձոր, հեռ.՝ 0281 20133:

է) Ատոմային էներգիայի օգտագործման միջուկային և ռադիացիոն անվտանգության հսկողության հարցերով զբաղվում է համանուն տեսչությունը (ՀՀ Պետատոմհսկողություն): Տեսչության հիմնական խնդիրն է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում պետական կարգավորումը՝ բնակչության և անձնակազմի անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պահպանության և ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակով:

Կոնտակտներ

Տեսչության պետ, հեռ.՝ 543991,

Միջուկային անվտանգության կարգավորման և հսկողության բաժին, հեռ.՝ 543995,

Ճառագայթային անվտանգության և վթարային պլանավորման կարգավորման ու հսկողության բաժին, հեռ.՝ 581654,

Միջուկային տեղեկատվության և վերլուծության բաժին, հեռ.՝ 543991,

Տեխնիկական բաժին, հեռ.՝ 563124:

Բնապահպանության նախարարության համակարգում գործում են նաև.

Նորմատիվամեթոդական վարչությունը, **հեռ.՝ 585394,**

Միջազգային համագործակցության վարչությունը, **հեռ.՝ 585349,**

Ընդերքի պահպանության վարչությունը, **հեռ.՝ 557300,**

Բնապահպանության և բնօգտագործման էկոնոմիկայի բաժինը, **հեռ.՝ 585349,**

Ֆինանսահաշվապահական բաժինը, հեռ.՝ 523826,

Քարտուղարությունը, հեռ.՝ 585426:

Բնապահպանության նախարարության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ նախարարության **հասարակայնության հետ կապերի բաժնից (հեռ.՝ 523835),** ինչպես նաև նախարարության պաշտոնական վեբ կայքից՝ այցելելով **www.mnpiac.am** հասցե:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am*) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:*

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերում է բնապահպանության բնագավառում պետական կառավարմանը: Այն համառոտ տեղեկատվություն է պարունակում ՀՀ Բնապահպանության նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործառույթների, ինչպես նաև հեռախոսահամարների վերաբերյալ:

Մայիս, 2005

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարությունը ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականություն իրականացնող պետական կառավարման հանրապետական մարմին է, որի հիմնական խնդիրներն են.

ա) ՀՀ շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, այդ թվում՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական ռեսուրսների բանական օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումը և կառավարումը,

բ) միջուկային տեղակայանքների, ռադիոակտիվ թափոնների տեղակայանքների և իոնացնող ճառագայթման աղբյուրների միջուկային ու ճառագայթային անվտանգության պետական կարգավորումը,

գ) շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը,

դ) ընդերքի պահպանության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

ե) բնապահպանության ոլորտում միջազգային համագործակցության իրականացման ապահովումը և այլն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Այդ բնագավառներն են.

ա) շրջակա միջավայրի պահպանություն,

բ) օդերևութաբանություն և մթնոլորտի մոնիտորինգ,

գ) ջրային ռեսուրսների կառավարում,

դ) օգտակար հանածոների պաշարների կառավարում,

ե) կենսառեսուրսների կառավարում,

զ) բնապահպանական վերահսկողություն,

է) ատոմային էներգիայի օգտագործման միջուկային և ռադիացիոն անվտանգության հսկողություն:

ա) Շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որի հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի՝ ներառյալ անտառի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման ու վերարտադրության պետական քաղաքականության ու ռազմավարության մշակումը և դրանց իրականացումը:

Կոնտակտներ.
Վարչության պետ, հեռ.՝ 583934,
Կենսաբազմազանության պահպանության բաժին, հեռ.՝ 585326,
Հողերի պահպանության բաժին, հեռ.՝ 583934:

բ) Օդերևութաբանության և մթնոլորտի մոնիտորինգի հարցերով զբաղվում է օդերևութաբանության և մթնոլորտի աղտոտվածության մոնիտորինգի բաժինը, որը աշխատանքներ է իրականացնում՝ ուղղված հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային և հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների և հիդրոօդերևութաբանական գործընթացների ու երևույթների վրա ակտիվ ներգործմանը, իրականացնում է մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառումը, նորմավորումը և այլն:

Կոնտակտներ.
բաժնի պետ, հեռ.՝ 533575:

գ) Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտով զբաղվում է Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, որը Բնապահպանության նախարարության առանձնացված ստորաբաժանում է: Գործակալության հիմնական խնդիրներն են ՀՀ ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման նպատակով քաղցրահամ և ստորերկրյա ջրային ռեսուրսների քաղաքականության ձևավորումը և իրականացման ապահովումը, ջրի ազգային պաշարի ապահովման և ավելացման միջոցառումների իրականացման ապահովումը, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի շրջանակներում ջրային ռեսուրսների կառավարման աջակցությունը և այլն:

Կոնտակտներ.
Գործակալության պետ, հեռ.՝ 540867,
Ջրային ռեսուրսների քաղաքականության և վերլուծության բաժին, հեռ.՝ 540875,
Ջրային ռեսուրսների կադաստրի վարման և մոնիտորինգի բաժին, հեռ.՝ 567077,
Ջրօգտագործման թույլտվությունների բաժին, հեռ.՝ 540875,
Ջրավազանային պլանավորման կառավարման բաժին, հեռ.՝ 567077:

դ) Օգտակար հանածոների պաշարների կառավարման ոլորտով զբաղվում է համանուն գործակալությունը, որի հիմնական խնդիրներն են ապահովել պետության շահերը ընդերքի և երկրաբանական ուսումնասիրման, արդյունաբերական գնահատման, նպատակային օգտագործման և պահպանության բնագավառում՝ ընդերքօգտագործողների շահերի հաշվառմամբ, նպաստել ընդերքի տնտեսական ներուժի բացահայտմանը, ինչպես նաև ընդերքի վերաբերյալ երկրաբանական և այլ տեղեկատվության հավաստիության պատշաճ մակարդակի ապահովմանը և այլն:

Կոնտակտներ.
Գործակալության պետ, հեռ.՝ 565196,
Հանքավայրերի արդյունաբերական գնահատման բաժին, հեռ.՝ 583051,
Օգտակար հանածոների պաշարների բաժին, հեռ.՝ 583066:

ե) Կենսառեսուրսների կառավարման հարցերով զբաղվում է համանուն գործակալությունը, որի հիմնական խնդիրներն են.

- ՀՀ տարածքում բնական էկոհամակարգերի, ներառյալ անտառների, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովումը, ինչպես նաև այդ ոլորտներում պետական քաղաքականության ձևավորմանն ու կառավարմանն աջակցությունը,
- էկոհամակարգերի բազմազանության ու դրանց կենսապաշարների պահպանության ու վերարտադրության ապահովումը և այլն:

Կոնտակտներ.
Գործակալության պետ, հեռ.՝ 527952,
Կենդանական ռեսուրսների կառավարման բաժին, հեռ.՝ 580711,
Բուսական ռեսուրսների կառավարման բաժին, հեռ.՝ 580711,
Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բաժին, հեռ.՝ 580699,
Դենդրոպարկերի կառավարման բաժին, հեռ.՝ 580711:

զ) Բնապահպանական վերահսկողության հարցերով զբաղվում է Բնապահպանության պետական տեսչությունը: Տեսչության հիմնական խնդիրներն են՝

ա) ՀՀ շրջակա միջավայրի պահպանությանը և